ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 327-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԲԱՌՈԺ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՇԱՏԵՐԵՎ ԾԱՌԵՐԻՑ ՃՅՈՒՂԵՐ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի «Բառոժ» կոչվող տարածքում գտնվող փշատերև ծառերից յուրաքանչյուրից կտրել 1-2 ճյուղ՝ (ընդհանուր 50-60 հատ ճյուղ՝ կատարելով սանիտարական էտ) Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի Ամանորյա տոնածառի համար:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 328-Ա

«ԼԻԴԵՐ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «ա» ենթակետերով և Շահեն Արշավիրի Նազարյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N Ն-25).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 6 գործարան հասցեում գտնվող, «ԼԻԴԵՐ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող 10-003-0004-0368 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված է 310,18 քմ ընդհանուր մակերեսով շինություն, ինքնակամ բացված 10 դուռ և փակված 9 պատուհան, որոնցի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,81789 հա, համարել օրինական:

2.Ընդունել ի գիտություն, որ կառույցները պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 310.18 քմ մակերեսով կառույցը սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ, «ԼԻԴԵՐ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի սեփականատեր Շահեն Արշավիրի Նազարյանին շինության համար վճարել 882 160(310,18 x 2844) ՀՀ դրամ, դռների համար՝ 14 220(10x1422) ՀՀ դրամ և պատուհանների համար՝ 12 800 (9x1422) ՀՀ դրամ:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 329-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՉԱԳԱՆ ՍԱՀԱԿԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ԵՎ ՋԱՌԻԹԱՓԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 23.05.2002 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, Զառիթափի համայնքապետարանի և Վաչագան Սահակի Մարկոսյանի միջև 2002 թվականի մայիսի 23-ին կնքված՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրի, հաշվի առնելով վարձակալ, Վաչագան Մարկոսյանի դիմումը (մտից N Մ-109, 09.12.2025 թ.).

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Սույն թվականի դեկտեմբերի 12-ից երկկողմանի համաձայնությամբ լուծել Զառիթափի համայնքապետարանի և քաղաքացի՝ Վաչագան Սահակի Մարկոսյանի միջև 2002 թվականի մայիսի 23-ին կնքված գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը 0.21 հա և 0.25 հա հողամասերի մասով (վկայականներ՝ N 0056494, 0056495):
2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 330-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 08-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 13-ի «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 0,00253 հա մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» թիվ 08-Ա որոշման վերնագրում և բովանդակության 1-ին կետում նշված «այլ հողեր գործառնական նշանակության» բառերը փոխարինել «բնակելի կառուցապատման գործառնական նշանակության» բառերով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 331-Ա

ԳԱՐՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ 10.09.205 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԹԻՎ ԱՇԹԴ/711/7817-25 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1 կետով, 98-րդ կետի 2-րդ պարբերությամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 10-ին Վայք համայնքի բնակիչ Գարուշ Հովհաննիսյանին, բնակելի տան կառուցման աշխատանքների կատարման համար տրամադրված թիվ ԱՇԹԴ/711/7817-25 ավարտական ակտը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վերոնշյալ անձանց որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 332-Ա

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0879 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. ՀՀ Պաշտպանության նախարարությանը սեփականության իրավունքով պատկանող, Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,0879 հա մակերես հողատարածքով, 10-003-0015-0023 կադաստրային ծածկագրով շինությունը հասցեավորել՝ Վայք համայնք, ք. Վայք, Շահումյան փողոց, 25 բնակելի տուն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025XTUK9A):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 17
ք. Վայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնք
ք.Վայք, Շահումյան 18, (098) 992894 cityvayk@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի **N 333-Ա**

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 75-րդ հրոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 44-րդ կետի ը/ ենթակետով և հիմք ընդունելով Վայք համայնքի ավագանու 11.12.2025 թվականի թիվ 114-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հաշվի առնելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության /ներկայիս՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության/ կողմից 16.05.2018թ. «Եղբայրներ» ՍՊԸ-ին տրամադրված թիվ ԱԿՏ-ՆԼ-583 Հերհեր հրաբխային ավազների հանքավայրի բաց եղանակով շահագործման օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, թիվ ՇԱԹ- 29/583 լեռնահատկացման ակտը՝ վերջինիս հետ կնքվել է ընդերքօգտագործման պայմանագիր 4,0 հա հողատարածքի շահագործման համար, 45,6 տարի ժամկետով ինչը նշանակում է, որ «Եղբայրներ» ՍՊ ընկերությունն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքօգտագործման իրավունք, Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Հերհեր բնակավայրում գտնվող թիվ 10-028-0105-0009 կադաստրային ծածկագրով 2.75654 հա մակերեսով հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել «Եղբայրներ» ՍՊ ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքի ժամկետին համապատասխան՝ մինչև 16.11.2063 թվականը, և վճարի չափը սահմանել տարեկան 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 18
ք. Վայք